Արարատի մարզում «Ձեզ համար» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

Ընդհանուր թվով **268** երեխայի ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ գնահատումներ են իրականացվել **60** հանրակրթական, **20** նախադպրոցական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող կենտրոնում, որոնցից **0-6 տարեկան առաջին անգամ՝ թվով 41 երեխա /30տ.,11իգ./** (յոթ երեխայի կարիքի գնահատումն իրականացվել է ծնողի դիմումի համաձայն), **0-6 տարեկան հերթական անգամ՝ թվով 10 երեխա /9 ար., 1իգ./, 6-18 տարեկան առաջին անգամ ՝ 100 երեխա /74ար., 26իգ./, 6-18 տարեկան հերթական անգամ՝ 117 երեխա /77ար.,40իգ./:**

**Առաջացած խնդիրներն ու լուծման տարբերակները**

1.1 Դասալսումների արդյունքում տարբեր ուսումնական առարկաներից հավաքագրված տվյալների ծավալը մեծ է, սակայն կիրառվող գործիքակազմը հնարավորություն չի տալիս դրանք ամբողջությամբ ներառել արձանագրության մեջ:

**Լուծում՝** Լուծում՝ Աջակցող մասնագետների հետ իրականացվել է տեղեկատվական խորհրդատվություն՝ երեխաների կարողությունների վերաբերյալ տվյալներն առավել սեղմ և նպատակային ձևակերպելու համար:

1.2 Հերթական գնահատումների ժամանակ դժվարություն է առաջանում հիմնական դպրոցների 9-րդ դասարանի շրջանավարտներին հաջորդ ուսումնական տարվա սկզբում գնահատելիս (քանի որ նրանք փոխում են ուսումնական հաստատությունը):

**Լուծում՝** Մշտական հեռախոսակապ է հաստատվում տվյալ սովորողների ծնողների և դպրոցների տնօրինության հետ՝ պարզելու, թե որտեղ են նրանք շարունակելու իրենց կրթությունը, ինչն էլ թույլ է տալիս ապահովել գնահատման գործընթացի շարունակականությունը:

**1.3** Դժվարություններ են առաջանում բարձր արժեք ունեցող խելամիտ հարմարեցումների նախատեսման և ձեռքբերման հարցում (օրինակ՝ Surface Pro EyeGaze Education: eyetuitive for Windows աչքի շարժմամբ կառավարվող կրթական համակարգը, որի արժեքն է £3,699.00), քանի որ դպրոցները չեն ստանում համապատասխան ֆինանսավորում դրանք գնելու համար:

**Լուծում՝** Համագործակցում ենք այն դպրոցների և կազմակերպությունների հետ, որոնք ունեն բարերարներ կամ հովանավորներ, ովքեր պատրաստ են աջակցել տվյալ խելամիտ հարմարեցումների ձեռքբերման հարցում:

2. **Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

«Ձեզ համար» ԲՀԿ-ն՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրի շրջանակներում տրամադրում է մանկավարժահոգեբանական ծառայություններ ընդհանուր թվով **1025** երեխաների **/701աբ., 324իգ.**/ հանրակրթական ուսումնական հաստատություններում, ՆՈՒՀ-ում՝ **122 / 92աբ., 30իգ.**/, իսկ ՄԿՈՒ-ում՝ թվով **1 ուսանող /1աբ.,/:**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ ունեցող երեխաների թիվն աճել է:

**Դպրոց**

**2.1 Միայն «Ձեզ համար» ԲՀԿ-ի կողմից** մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրվում է ԿԱՊԿ ունեցող **324** երեխաների :

**2.2 Միայն ուսումնական հաստատությունների կողմից** աջակցություն է տրամադրվում **93** ԿԱՊԿ ունեցող երեխաների:

**2.3 «Ձեզ համար» ԲՀԿ-ն ուսումնական հաստատությունների հետ համատեղ** մանկավարժահոգեբանական աջակցություն է տրամադրում **608** ԿԱՊԿ ունեցող երեխաների:

Ծառայությունների տեսակներ/քանակ

Դպրոց

| ՏՄԱԿ | ԹԻՎ | ԴՊՐՈՑ | ԹԻՎ |
|---|---|---|---|
| Հատուկ մանկավարժ | 898 | Հատուկ մանկավարժ | 0 |
| Հոգեբան | 34 | Հոգեբան | 660 |
| Լոգոպեդ | 353 | Լոգոպեդ | 0 |
| Սոցիալական մանկ. | 107 | Սոցիալական մանկ. | 0 |
| Այլ/սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ | 5 | Այլ | 0 |

ՆՈՒՀ

2.4 **Միայն «Ձեզ համար» ԲՀԿ-ի կողմից ՆՈՒՀ-ում** աջակցություն տրամադրվում է թվով **57** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների:

2.5 **Միայն նախադպրոցական ուսումնական հաստատությունների** կողմից աջակցություն է տրամադրվում թվով **28** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների:

2.6 **«Ձեզ համար» ԲՀԿ-ն** նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ համատեղ մանկավարժահոգեբանական աջակցություն է տրամադրում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թվով **37** երեխաների:

Ծառայությունների տեսակներ/քանակ

ՆՈՒՀ

| ՏՄԱԿ | Թիվ | ՆՈՒՀ | Թիվ |
|---|---|---|---|
| Հատուկ մանկավարժ | 66 | Հատուկ մանկավարժ | 19 |
| Հոգեբան | 31 | Հոգեբան | 63 |
| Լոգոպեդ | 71 | Լոգոպեդ | 14 |
| Սոցիալական մանկավարժ | 12 | Սոցիալական մանկավարժ | 3 |
| Այլ /տիֆլոմանկավարժ, մանկավարժ/ | 1 | Այլ | 0 |

**2.7 Տնային ուսուցում**

Ներկա պահին տնային ուսուցում և մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրվում է թվով՝ **48 /30տր.,18 իգ.**/ ԿԱՊԿ ունեցող սովորողների:

**3. Հավելյալ տեղեկատվություն**

**0-6 տարեկան թվով 8/6տր.,2իգ./ ԿԶԱՊԿ ունեցող** երեխաների մանկավարժահոգեբանական աջակցությունը ավարտվել է, քանի որ թվով երկու նախադպրոցական ուսումնական հաստատություն վերանորոգման փուլում են:

**0-6 տարեկան թվով 2 /2 տր., / ԿԶԱՊԿ ունեցող** երեխաներ որևէ ուսումնական հաստատություն չեն հաճախում,

**6-18 տարեկան թվով 1/1տր./ ԿԱՊԿ ունեցող** երեխայի մահվան պատճառով մանկավարժահոգեբանական աջակցությունը ավարտվել է:

**Թվով 7** ԿԱՊԿ ունեցող աշակերտներ Արարատի մարզից տեղափոխվել են այլ մարզ/տարածաշրջան:

**4.Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ**

**4.1** Ապրիլ-հունիս ամիսների ընթացքում իրականացվել են վերապատրաստումներ թվով **83**

**ուսումնական հաստատություններում,** որոնցից **48-ը՝** միջին, հիմնական, ավագ ուսումնական հաստատություններում, **33-ը՝ ՆՈՒՀ**-ում և **2-ը՝** ՄԿՈՒ հաստատությունում:

4.2 Ուսումնական հաստատություններում իրականացված վերապատրաստումների ընդհանուր թիվը հատով՝ **103:**

**Վերապատրաստման թեմաներն են՝**

| **ՀՀ** | **Վերապատրաստման թեմա** | **Վերապատրաստման մասնակից անձանց թիվ** |
|---|---|---|
| 1 | ԱՈՒՁՊ | 23 |
| 2 | Կրթության աջակցող միջոցներ՝ խելամիտ հարմարեցումներ և մատչելիություն | 874 |
| 3 | Անվտանգ ու ապահով կրթական միջավայր | 18 |
| 4 | Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում | 29 |
| 5 | Ծնողավարման հմտություն | 40 |
| 6 | Մուլտֆիլմերի հոգեբանական ազդեցությունը նախադպրոցական տարիքում | 48 |

| | | |
|---|---|---|
| 7 | Կախվածությունները ընտրության և ազատության սահմանին | 37 |
| 8 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման ընթացակարգը | 211 |
| 9 | Աուտիզմ ունեցող սովորողների ընդհանուր և խոսքային առանձնահատկությունները | 18 |

4.3 Վերապատրաստումներին մասնակցել են ընդհանուր թվով **1298 անձիք**:

**4.4 Առաջարկություններ վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի գործունեության վերաբերյալ**

1.Մեթոդական նյութերի միասնական էլեկտրոնային բազայի ստեղծում. Որպեսզի վերապատրաստումների նյութերը, ուղեցույցներն ու գործիքակազմերը չմնան անհատական համակարգիչներում, առաջարկվում է ստեղծել մեկ միասնական, հեշտ հասանելի էլեկտրոնային շտեմարան (օրինակ՝ ընդհանուր դրայվ), ինչը մասնագետներին թույլ կտա ցանկացած պահի արագ գտնել ու իրենց առօրյա աշխատանքում կիրառել անհրաժեշտ մեթոդական նյութերը :

2.Թեմաների ընտրության գործընթացի բարելավում՝ ըստ իրական կարիքների. Դասընթացներում մասնագետների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով առաջարկվում է վերապատրաստման ծրագրերը ձևավորել մասնագետների շրջանում իրականացված նպատակային հարցումների և կարիքների գնահատման արդյունքների հիման վրա, ինչը թույլ կտա ուղիղ պատասխանել նրանց գործնական պահանջներին:

3.Լավագույն փորձի հավաքագրում և տարածում. Առաջարկվում է պարբերաբար հավաքագրել, մշակել և ներկայացնել վերապատրաստումների արդյունքում մասնագետների կողմից

աշխատանքում հաջողությամբ կիրառված կոնկրետ փորձերն ու օրինակները (Case Studies), ինչը կծառայի որպես տեսանելի, աշխատող մոդել և լրացուցիչ մոտիվացիա կհանդիսանա մյուս գործընկերների համար:

4.Մեթոդական նյութերի թվայնացման և մատուցման ձևաչափերի բազմազանություն. ընդլայնել թվային ուսումնական ռեսուրսների կիրառությունը՝ ավանդական մեթոդական նյութերին զուգահեռ մշակելով կարճ տեսադասեր, ինֆոգրաֆիկաներ, գործնական ուղեցույցներ (cheat-sheets), ինքնագնահատման թեստեր և այլ ինտերակտիվ նյութեր՝ մասնագետների համար տեղեկատվության առավել հասանելի և արդյունավետ յուրացման նպատակով:

5.Վերապատրաստողների մասնագիտական ակտիվության խրախուսման համակարգի ներդրում. Մշակել խրախուսման մեխանիզմներ՝ փորձի փոխանակման, հեղինակային մեթոդական նյութերի մշակման և մասնագիտական շտեմարանի հարստացման գործում ակտիվ ներգրավվածություն ցուցաբերող մասնագետների գործունեությունը գնահատելու և խթանելու նպատակով:

6.Հետադարձ կապի գործիք. Յուրաքանչյուր նյութի կիրառման համար գնահատման կամ մեկնաբանությունների հնարավորություն, որպեսզի օգտվողները կարողանան հայտնել, թե որքանով էր նյութը օգտակար կամ ինչն է պետք բարելավել:

### 4.5 Բովանդակային մշակումներ

Պատրաստվել են թվով **3** աշխատանքային տետրեր՝ «Տիեզերքում. մեծ լաբիրինթներ», «Նեյրոգիմնաստիկա», «Թվերի աշխարհում», թվով 3 խաղ, «Կախվածություններ. Ընտրության և ազատության սահմանին» սեմինարի նյութ,որը նախատեսված է դեռահասության շրջանում կախվածությունների մասին իրազեկվածության բարձրացմանը: Նյութերը կներկայացվեն Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի բովանդակային մշակումների բաժին:

## 5. Խորհրդատվություն

5.1 Խորհրդատվություններ տրամադրվել են **թվով 99** տարրական, միջին, հիմնական, ավագ, **թվով ՝ 70** նախադպրոցական, **թվով 2՝** ՄԿՈՒ հաստատություններում:

**Խորհրդատվության թեմաներ՝**

- Ուսումնական և ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ
- ԿԱՊԿ ունեցող սովորողների ներգրավածությունը դասապրոցեսին
- Սոցիալական ցանցերի ազդեցությունը երեխայի վրա
- Աջակցող միջավայրի ստեղծում հատուկ կրթական կարիքներ ունեցող սովորողների համար

- Ինչպե՞ս զարգացնել երեխայի մտածողությունը
- Ծնողների դերը երեխայի զարգացման մեջ ԱՈՒՊ-ի նպատակների իրականացում և սպասվող վերջնարդյունքները
- Գրավոր խոսքի խանգարումներ շտկման ուղղությամբ տարվող լոգոպեդական աշխատանքի մեթոդիկա
- Ապահով և անվտանգ կրթական միջավայր
- Միջմասնագիտական համագործակցությունը սովորողի կարիքահեն աջակցության կազմակերպում
- Հնչութահնչյունային թերզարգացման տեսական հիմքեր
- Սթրեսի և հուզական վիճակի կառավարում
- Հնչարտաբերման և խոսքային աղավաղումների հաղթահարում
- Ընթերցանության առաջին քայլերը ինչպես ձևավորել հետաքրքրություն և մոտիվացիա կարդալու նկատմամբ
- ԵՊ թիմի կազմավորման և իրականացման աշխատանքներ
- Աուտիզմի իրազեկում
- Ուշադրության և հիշողության զարգացման ռազմավարություններ որպես հիմք մաթեմատիկական կարողությունների համար
- Խելամիտ հարմարեցումների ձեռքբերումն և կիրառումը
- Խրախուսման դերը երեխայի դաստիարակության գործում
- Ինչպես՞ հաղորդակցվել աուտիզմ ունեցող սովորողների հետ
- ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների հետ աշխատելու մեթոդները
- Խոսքի զարգացման օրինաչափությունները
- Վարքային դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատանքային առանձնահատկությունները
- Հնչարտաբերման և խոսքային աղավաղումների հաղթահարում
- Գնահատման արդյունքում տրվող խելամիտ հարմարեցումների բնութագիր
- Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ անցկացվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները
- Ուսումնական դժվարություններ ունեցող երեխաների վաղ հայտնաբերման կարիք գնահատման անհրաժեշտություն ու կարևորություն
- Աուտիզմի իրազեկում դպրոցում մուլտֆիլմերի դիտման և քննարկման միջոցով
- Հանդուրժողականության և ներառական վերաբերմունքի ձևավորումը աուտիզմ ունեցող սովորողների նկատմամբ
- ՀՊՉ չափանիշների կիրառման առանձնահատկությունները ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ
- Աուտիզմ ունեցող երեխաների առանձնահատկությունները
- Աուտիզմ. Իրազեկման հանդիպում ծնողների հետ
- Տեխնոլոգիաների ճիշտ օգտագործումը , ինչպես օգտվել հեռախոսից կամ համակարգչից որպես ուսման և

շփման օգնական ոչ թե խանգարող

- Համագործակցություն և արդյունավետ աշխատանքի կազմակերպում
- Խնդիրների լուծման հմտությունների զարգացում երեխաների մոտ
- Լսողության խանգարում ունեցող երեխաների հետ տարվող բառապաշարի զարգացման աշխատանքների ուսումնասիրությունը
- Ընտրողական մուտիզմ ունեցող սովորողների հետ տարվող աշխատանքները դասարանում
- Մուտիզմը կրթական միջավայրում. ուսուցչի դերը և ռազմավարությունը
- Դիսգրաֆիա՝ առաջացած լեզվական վերլուծության և համադրության խանգարումների հիման վրա
- Խոսքի և հաղորդակցման դժվարությունների հաղթահարումը այլընտրանքային հաղորդակցման մեթոդներով
- Համացանցի դրական և բացասական ազդեցությունը երեխաների վրա՛
- Վարքային խնդիրներ ունեցող սովորողների ներառմանը խթանող տեխնիկաներ
- Ինչպե՞ս աշխատել խմբում վարքային խանգարումներ ունեցող երեխաների հետ
- ՄՅ աջակցության տրամադրման ընթացակարգը
- Երեխայի վարքի առանձնահատկությունների ճանաչում ՝ մուլտֆիլմի օրինակով
- Ինչպե՞ս խրախուսել ճիշտ վարքը Ն/դ տարիքում
- Ցանկալի վարքի խթանում, խրախուսման ձևեր
- Խաղը որպես երեխայի կրթության և զարգացման միջոց
- Գերխնամք որպես երեխայի զարգացման խոչընդոտող գործոն
- Զարգացման և խոսքի խանգարումների տարբերակիչ բնութագիրը
- Բռնության կանխարգելում և նախանշաններ
- Երեխայի զարգացման բազմազանության ճանաչում և ներառական մոտեցումների կիրառումը ՆՈՒՅ-ում
- Երաժշտաթերապիան որպես օգնող միջոց վարքի կառավարման գործում
- Ինչպե՞ս ներգրավվել ՈՒՊԳՅ ունեցող սաներին պարապունքներին
- Ուշադրության խանգարղումների մասին նախազգուշացնող ազդակներ
- Շփման և հաղորդակցման հմտությունների զարգացման ուղղված տեխնիկաների կիրառում:

*5.2 Խորհրդատվությունների ընդհանուր թիվը հատով՝* ***830:***

*5.3 Խորհրդատվություն ստացել են* ***թվով 5615 անձինք:***

**6. Մշտադիտարկում**

6.1 Իրականացվել են թվով **176** մշտադիտարկումներ՝ **110** միջին, հիմնական, ավագ ուսումնական հաստատություններում, թվով **64**՝ նախադպրոցական ո և թվով **2**՝ ՄԿՈՒ հաստատություններում:

**6.2 Մշտադիտարկվել են.**

- Ուսումնական հաստատություններում խելամիտ և միջավայրային հարմարեցումները

- ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ երեխաների անհատական թղթապանակները
- ԱՈՒՊ/ԱՈՒՁՊ-ները
- ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ ունեցող երեխաների մասնակցությունն ու ներգրավվածությունը դասամպրոցեսի ընթացքում
- ԿԱՊԿ գնահատման ընթացակարգը
- ՏՄԱԿ-դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունը
- Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացը

**6.3 Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են հետևյալ դժվարությունները.**

1. ԱՈՒՊ-ի 7.1 կետի ամփոփման դժվարություն՝ պայմանավորված որակիչներին համապատասխան բնութագրով: Կատարվել է գնահատման խմբի հետ քննարկում, աջակցողներին տրվել է համապատասխան խորհուդատվություն՝ որակիչների փոփոխության հարցում:

2 Ինտելեկտուալ մտավոր 1 ին աստիճան կարիք ունեցող սովորողների համար աջակցողի կողմից նպատակի սահմանամ դժվարություն: Հաստատության տրվել է խորհրդատվություն մեկ կիսամյակ ներառել երկարօրյա ուսուցման, կատարել ուսումնական նյութի պարզեցում, մինչ գնահատման ներկայացնելը:

Կենտրոնի անվանումը՝ <<Ձեզ համար>> ԲՀԿ

Ծրագրի ղեկավար՝ ______________ Գայանե Բալասանյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«1 » «07» 2026թ.